16.02.2026թ.

ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԱՌՑԱՆՑ ԴԻՄՈՒՄԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ՁԵՌՆԱՐԿ

1. ՈՎՔԵ՞Ր ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ

1.1. Դուք կարող եք դիմել դրոշմանիշային վճարի ամբողջական կամ մասնակի վերադարձի համար.

1. Եթե Դուք հանդիսանում եք **ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողի ծնող կամ ամուսին և/կամ զավակ**:
2. Եթե Դուք հանդիսանում եք **զոհված զինծառայողի ծնող, ամուսին կամ զավակ:**

2. Ի՞ՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ

2.1. Դիմելու համար անհրաժեշտ է ունենալ՝

1. **Զինծառայողի հետ կապը հաստատող փաստաթուղթ՝**
   - ծննդյան վկայական կամ
   - ամուսնության վկայական:
2. **Ծառայության ժամկետների կամ վճարված գումարների մասին տեղեկանք**

*Հիմնականում անհրաժեշտ չէ ներկայացնել, քանի որ փվյալները ՁԻՆԱՊԱՀԸ **ստանում է ինքնաշխատ (ավտոմատ) կերպով** ՊՆ-ից և ՊԵԿ-ից, բացառությամբ ուժային կառույցում աշխատողների:*

3. ԻՆՉՊԵ�Ս ԴԻՄԵԼ ԱՌՑԱՆՑ

ՔԱՅԼ 1. ԱՆՑԵՔ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՂՄԱՄԲ՝

https://stampreturn.zinapah.am/frontend/web/index.php

1. Ընտրեք՝ առկա դիմումի ձևերից **«Դրոշմանիշային վճարի գումարների վերադարձ» ենթաբաժինը:**
2. Մուտքագրեք Ձեր գործող հեռախոսահամարը՝ **«Հեռախոսահամար»** դաշտում:
3. Մուտքագրեք Ձեր հեռախոսահամարին SMS-ով ստացված քառանիշ կոդը
4. Մուտքագրեք ստացված կոդը **«Ստուգիչ կոդ»** դաշտում:

ՔԱՅԼ 2. ՆՈՐ ԴԻՄՈՒՄԻ ՄՈՒՏՔԱԳՐՈՒՄ

1. Սեղմեք բացված պատուհանի ձախ հատվածում **«Մուտքագրել նոր դիմում»** կոճակը **Լրացրեք էկրանին հայտնված դիմումատուի տվյալները.**
   - Անուն, ազգանուն
   - Ծննդյան ամսաթիվ
   - Հանրային Ծառայությունների Համար - ՀԾՀ
   - Անձը հաստատող փաստաթղթի համար
   - Էլեկտրոնային հասցե (եթե առկա է)
2. Սեղմեք **«Շարունակել»**

ՔԱՅԼ 3. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՄ

Բացվում է **«Դիմումի մուտքագրում – լրացուցիչ տվյալներ»** բաժինը, տվյալների նույնականացումից հետո:

Լրացրեք հետևյալ դաշտերը՝

1. **«Դիմումատուի կարգավիճակ»**
   Ընտրեք ստորև տարբերակներից մեկը՝
   - **«Պարտադիր ժամկետային զինծառայողի ընտանիքի անդամ»**
     կամ
   - **«Զոհված զինծառայողի ընտանիքի անդամ»**
2. **Կապը զինծառայողի հետ՝** ընտրեք ստորև տարբերակներից մեկը՝
   - **«ծնող»** կամ
   - **«ամուսին»** կամ
   - **«զավակ»**
3. **Գործատուի տեսակը՝** ընտրեք ստորև տարբերակներից մեկը՝
   - **«այլ»**
     կամ
   - **«ուժային կառույց»**

4.Գումարը ստանալու եղանակ՝ ընտրեք ստորև տարբերակներից մեկը՝

Եթե ՈՒՆԵՔ բանկային հաշվեհամար.

- ✓ Ընտրեք **«Բանկային հաշվի փոխանցում»**՝ նշելով բանկի Ձեր անձնական հաշվեհամարը: Այս տարբերակը նշելիս պարտադիր է սեղմել (նշել) համաձայնության դաշտը, որպեսզի ստուգվի Ձեր կողմից նշված հաշվեհամարի պատկանելիությունը:

Եթե ՉՈՒՆԵՔ բանկային հաշվեհամար.

- ✓ Ընտրեք **«Տարանցիկ հաշվի միջոցով»** տարբերակը՝ **«Վճարող կազմակերպություն»** դաշտից ընտրելով Ձեր **նախընտրելի բանկը**:

5. Սեղմեք **«Շարունակել»:**

ՔԱՅԼ 4. ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Դիմումատուի էկրանին **պետք է հայտնվի հաղորդագրություն**, որ՝

«Դիմումն ընդունված է»

Եթե Ձեր Դիմումի մշակման փուլում թերություններ չհայտնաբերվեն ապա վճարումը կկատարվի մինչև 60 օրվա ընթացքում:

4. ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏՈՒԳԵԼ ՁԵՐ ԴԻՄՈՒՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

4.1. Դիմումի ընթացքին կարող եք հետևել հետևյալ կերպ՝

4.1.1. Կրկին անցեք հետևյալ հղմամբ՝
https://stampreturn.zinapah.am/frontend/web/index.php

4.1.2. Առկա դիմումի ձևերից ընտրեք՝ «**Դրոշմանիշային վճարի գումարների վերադարձ»** ենթաբաժինը:

4.1.3. Մուտքագրեք Ձեր հեռախոսահամարը:
4.1.4. Մուտքագրեք Ձեր հեռախոսահամարին SMS-ով ստացված քառանիշ կոդը:
4.1.5. Դիտեք դիմումի կարգավիճակը:

5. ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԴԻՄՈՒՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. **Դիմումն ընդունվել է՝** Ձեր տվյալները նույնականացվել են, խնդիր չկա:
5.2. **Մշակման փուլում է՝** Դիմումը գտնվում է ԶԻՆԱՊԱՀԻ կողմից մշակման փուլում:
5.3. **Վճարվել է՝** խնդիր չի հայտնաբերվել, և գումարը փոխանցվել է:
5.4. **Մերժվել է՝** ներկայացված փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն:

- ✓ *Եթե նշել եք էլեկտրոնային հասցե, կստանաք նամակ՝ մերժման պատճառաբանությամբ:*
- ✓ *Եթե էլ. հասցե չեք նշել, համապատասխան աշխատակիցը կապ կհաստատի Ձեզ հետ:*

5.5. Մուտքագրվում է՝

Դիմումն անավարտ է, Ձեր կողմից չեն կցվել համապատասխան փաստաթղթերը: Անհրաժեշտ է սեղմել աջ անկյունի **«ԴԻՏԵԼ»** կոճակը և կցել անհրաժեշտ փաստաթղթերը:

6. ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

6.1. **Պարտադիր ժամկետային զինծառայողի դեպքում** վերադարձը կատարվում է միայն այն ամիսների համար, որոնց ընթացքում զինծառայողը փաստացի գտնվել է պարտադիր զինվորական ծառայության մեջ:

6.2. **Զոհված զինծառայողի դեպքում** եթե զինծառայողը զոհվել է հաշվետու տարվա ընթացքում (օրինակ՝ 2025 թ.), ապա վերադարձը կատարվում է մահվան ամսվա 1-ից մինչև տվյալ հաշվետու տարվա վերջին օրը ընկած ժամանակահատվածի համար: